

Իրինե Շուրիթիձե

*Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան
փոխհարաբերությունների կենտրոն*

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԼԵՉՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հողվածի նպատակն է մեկ անգամ ևս ուշադրությունը կենտրոնացնել տարիքային առանձնահատկությունների նշանակության վրա երկրորդ լեզվի ուսանման/ուսուցման համատեքստում, ինչը հիշարժան և կարևոր գործոն է ինչպես մայրենի/առաջին լեզվի ուսանման ժամանակ, այնպես էլ երկրորդ լեզվի տիրապետման ընթացքում: Հողվածում կքննարկվեն միջազգային հետազոտությունների հիման վրա ներկայացված տեսակետներ և վերլուծություն՝ կապված տարիքային առանձնահատկությունների և, մասնավորապես, «Կրիտիկական շրջանի վարկածի հետ» (Critical Period Hypothesis): Բացի այդ, կներկայացնենք այն նշանակալի հանգամանքները, որոնք անբաժան են լեզվի ուսուցման գործընթացից՝ տարիքային առանձնահատկությունների հետ: Գլխավոր հարցը, որ գոյություն ունի տվյալ հարցի շուրջ, այն է, թե որքանով կարևոր է տարիքային շերտավորումը երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում, ի՞նչն է պայմանավորում միևնույն խմբի ներկայացուցիչների մեջ տարբեր արդյունքներ:

Գոյություն ունի լայնորեն տարածված կարծիք, որ երկրորդ լեզվին հաջող տիրապետումը կապված է սովորողի տարիքից, ինչը ենթադրում է երկրորդ լեզվի յուրացման համար լավագույն շրջանի (տարիքի) ընտրություն: Այս տարիքը հանդիսանում է ծնվելուց մինչև հասունությունն ընկած շրջանը: Հողվածում կփորձենք ներկայացնել ինչպես դրական, այնպես էլ բացասական փաստարկներ՝ կապված վաղ հասակում լեզվի ուսանման հետ:

Ներածություն

Երկրորդ լեզվի ուսանման/ուսուցման գործընթացը և նրա հետ կապված հանգամանքների հետազոտությունը և վերլուծությունը երկար ժամանակ է, ինչ լեզվաբանների, նաև լայն հասարակայնության շահերի ոլորտն է հանդիսանում: Տվյալ հարցն իր հրատապությունը չի կորցրել ոչ մի դարաշրջանում, թեպետ առանձնահատուկ ծանրաբեռնում է ձեռք բերում ներկայիս դարաշրջանում, ողջ

աշխարհում երկրորդ լեզվի ուսուցման հանդեպ աճած պահանջմունքի հետքերով ինչպես մեծամասնությունների, այնպես էլ փոքրամասնությունների համար:

Կարծում ենք, հետաքրքիր կլինի ընթերցողի ուշադրությունը մեկ անգամ ևս կենտրոնացնել երկրորդ լեզվի ուսուցման գործընթացի, մասնավորապես, երկրորդ լեզվի յուրացման գործընթացում տարիքային առանձնահատկությունների վրա: Կփորձենք ներկայացնել այն փորձը,

որն այս ուղղությամբ կուտակվել է տարբեր երկրներում անցկացված հետազոտությունների հետևանքով: Կհիմնվենք օտար երկրների փորձի վրա, քանի որ այս ուղղությամբ Վրաստանում դեռևս գոյություն չունի վերջին շրջանում անցկացված լայնամասշտաբ հետազոտություն, որը մեզ հնարավորություն կտար որոշակի եզրահանգումներ անել և զուգահեռներ անցկացնել օտարերկրյա փորձի հետ:

Պետք է նշել, որ արդիականությունը բերել է երկլեզվության/ բազմալեզվության անհրաժեշտություն: Երկու կամ ավելի լեզուների իմացությունը դարձել է նախապայման լիարժեք կրթություն ստանալու, հաղորդակցվելու, հանրայնացման և ամենազլիավորը՝ այսօր արդեն երկլեզվությունը համարվում է կարիերային առաջընթացի համար կայուն երաշխիքներից մեկը: Հենց տվյալ փաստն է պայմանավորել ողջ աշխարհում երկրորդ լեզուն սովորելու հանդեպ աճած հետաքրքրությունը և, զուգահեռաբար, առաջացել են բազմաթիվ վիճելի հարցեր երկրորդ լեզվի ուսուցման ուղղությամբ, օրինակ՝ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ո՞ր տարիքում պետք է սկսի երեխան սովորել երկրորդ լեզուն, վաղ հասակում երկրորդ լեզվի ուսանումը խափանո՞ւմ է արդյոք մայրենի լեզուն սովորելը, ուսուցման ի՞նչ մեթոդներ են արդարացված, որպեսզի տեղի ունենա երեխայի կոգնիտային զարգացում և բազմաթիվ այլ հարցեր, որոնք դեռևս պատասխան չունեն: Չնայած ողջ աշխարհում հետազոտությունների և դիտարկումների հետևանքով հավաքված փորձին, լեզվաբանության հետազոտողների շրջանում միասնական,

ամեն ինչ պարունակող մոտեցում գոյություն չունի:

Ինչպես բազմաթիվ հետազոտողներ են ապացուցում, վաղ հասակում երկրորդ լեզու սովորելը բազմաթիվ առավելություններ ունի, թեպետ այս վարկածի ընդդիմախոսների բացատրության համաձայն, ուշագրավ են նաև այն վտանգները, որոնց անտեսումը մեծ հիմնախնդիր է հանդիսանում երեխայի կոգնիտային զարգացման համար: Հենց գոյություն ունեցած առավելություններին և վտանգներին կտրամադրվի հոդվածի հիմնական մասը, որը կհիմնվի օտար երկրներում առկա հետազոտությունների և փորձի վրա:

Վաղ հասակում երկրորդ լեզվի ուսուցման դրական բնութագրիչները

Լեզու հետազոտողների բացատրության համաձայն, երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ ցանկացած տարիքի երեխայի համար կարևոր են լավ փորձված և փորձարկված ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները, ուսուցիչների բարձրորակությունը, ինչը նախապայման է ցանկալի ուսումնական արդյունքների համար: Առանձնահատուկ նշանակություն վերոնշյալ հանգամանքները ձեռք են բերում վաղ հասակում, այն ժամանակ, երբ երեխան երկու լեզվի զուգահեռաբար է տիրապետում (ենթադրվում է մայրենի և երկրորդ լեզուն):

Անհատի տարիքային զարգացման բազմերակողմանիությունից ելնելով, ինչը մեծապես սահմանում է մի շարք սոցիալական, կրթական և այլ ցանկացած բնագավառում նրա հաջողությունը, ուսանում-ուսուցման գործընթացում երկրորդ լեզվի ուսուցման թեմատիկայով

հետաքրքրված հետազոտողների շրջանում հետազոտման կարևորագույն ֆենոմեններից մեկն է հանդիսանում հենց տարիքային առանձնահատկությունները (Աբելյո-Կոնտեսի, 2008):

Գոյություն ունի հասարակության մեջ լայնորեն տարածված տեսակետ, որի համաձայն երիտասարդ լեզու սովորողների մեջ (ենթադրվում է ծնվելուց մինչև հասունության տարիքն ընկած ժամանակամիջոցը), անհամեմատ արագ և արդյունավետորեն է ընթանում լեզվի յուրացման գործընթացը, և նրանք ունեն ավելի լավ արդյունքներ (Սկովելի, 2000 տե՛ս՝ Աբելյո-Կոնտեսի, 2008): Դիտարկումները հստակեցրել են, որ երկրորդ լեզվի ուսանման գործընթացի և տարիքային առանձնահատկությունների փոխադարձ կապն ավելի համալիր երևույթ է, որը կապվում է տարիքային շրջանի շերտավորման, մասնավորապես տարիքային բաժանման հետ վաղ և կամ համեմատաբար ուշ տարիքում լեզու սովորողների (early and late-starting L2 learners) (Ջոնսթոն, 2002):

Որպեսզի անհատը դառնա երկլեզու /բազմալեզու և կարողանա երկու կամ ավել լեզուներից հասնել բարձր իրազեկությունների, գոյություն ունեն դժվարություններ և հանգամանքներ, որոնք սահմանում են հնարավոր հաջողությունը: Ինչպես նշեցինք սկզբում, լեզու սովորելու գործընթացը հանդիսանում է բազմակողմանի գործընթաց, տարբեր կարևոր հանգամանքների միասնականություն, առանց որոնց նախատեսման անհնար է երկրորդ լեզվի լիարժեք կերպով տիրապետումը և անհատի, որպես երկլեզվային, ձևավորումը: Այս հանգամանքների ոչ լրիվ ցանկին են

պատկանում՝ միջանձնային հարաբերությունները, «մշակութային հասկացողականությունը» (cultural understanding), անձնական ինքնավստահությունը և սոցիալական ասպեկտները, խտրականության բնութագրիչները, առանձնապես, երբ խոսքը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասին է և այլն (Կորդովա, Լեջանդրո, 2010):

Ելնելով սեփական փորձից և ուրիշների հետազոտությունների նախատեսմամբ, գիտնականների մի մասը հավաստում է, որ երկրորդ լեզու սովորելը վաղ հասակում ավելի շատ դրական, քան բացասական կողմեր ունի, այնպիսիք, ինչպիսիք են՝ ճանաչողական զարգացումը, կարիերային առաջընթացի ավել հեռանկարը, այլ մշակույթի ընդունումը և այլն (Կորդովա, Լեջանդրո, 2010): Հոգեբանների մի մասը պարզաբանում է, որ երկրորդ լեզու սովորելու համար լավագույն շրջանը գրոյից մինչև յոթ տարեկանն է, քանի որ այս ժամանակ երեխայի միտքն ամենից շատ է մոբիլիզացված որքան հնարավոր է շատ տեղեկություններ յուրացնելու և նստվածք տալու նրա գիտակցության մեջ (Կորդովա, Լեջանդրո, 2010):

«Լեզուների աշխարհ քայլ անելը» վաղ տարիքում որպես անհամեմատ հեշտ, հետաքրքիր և զվարճալի գործընթաց է ընկալվում երեխայի համար, որն առանց նպատակաուղղված ուսանման կարողանում է զուգահեռաբար երկու լեզվի տիրապետել, այն ժամանակ, երբ դեռահասը, չնայած նրան, որ նա կարող է որոշակի քերականական կամ իմաստային կառուցվածքներ գիտակցել, անհամեմատ ավելի դիմադրությունների է հանդիպում (Կորդովա, Լեջանդրո, 2010): Վաղ

տարիքում սվորած լեզվի կիրառումն ակադեմիական թե հաղորդակցական նպատակների համար անհամեմատ հեշտ է, քանի որ երկլեզվության հետևանքով զարգացած կոգնիտային առավելությունը հնարավորություն է տալիս հաղորդակցությունը երկրորդ լեզվով լինի մեխանիկական, առանց ամենայն երկարատև դադարների և տատանումների, ինչը խոսողի խոսացածն անհամեմատ ավելի ընկալելի է դարձնում, քան ուշ տարիքում սվորած լեզվի կիրառության ժամանակ, երբ հաճախակի են սայթաքումները և մեկ անգամ ասված բառի կամ նախադասության մի քանի անգամ կրկնությունը՝ քերականական կամ իմաստային սխալն ուղղելու նպատակով:

Ի տարբերություն դեռահասության շրջանում սվորած լեզվի, վաղ հասակում լեզու սովորողը հոյակապ է կարողանում կենտրոնանալ համատեքստում բառի նշանակության փոփոխության վրա՝ երկիմաստ բառի կամ արտահայտության կիրառության ժամանակ (<http://ri.ues.edu.sv/590/1/10136247.pdf>):

Հետաքրքիր կլինի նշել ևս մեկ հետաքրքիր դիտարկում, որը վերաբերում է երկրորդ լեզու սովորելու ընթացքում մայրենի լեզվի ամրապնդման հեռանկարին: Օրինակ, երբ երեխան երկրորդ լեզվից մի միտքն արտահայտող մի քանի արտահայտություն կամ բառ է սովորում, հաճախ նրա մոտ ցանկություն է առաջանում զուգահեռներ անցկացնել մայրենի լեզվի հետ և փորձում է գտնել նոր բառերի համարժեքը: Այս գործընթացը նպաստում է որոշակի նորությունների հայտնաբերմանը մայրենի լեզվում, առանձնապես վաղ հասակում, երբ նրա երևակայությունը և ավելին իմանալու

ցանկությունը անսահման է: Չափահասության շրջանում լեզու սովորելը ամենօրյա ձանձրացուցիչ գործընթաց է՝ պակաս ծանրաբեռնված հետաքրքիր հայտնագործություններով և նորի որոնման ցանկությամբ: Հաճախ ետպուրերտային տարիքում երկրորդ լեզու սովորելը անհրաժեշտությունից է բխում, որը զուրկ է այլ աշխարհ գտնելու ցանկությունից, քանի որ այս տարիքում արդեն երեխան առաջնահերթ է համարում այլ ավելի կարևոր հարցեր, քան ինչ՞ու, ինչի՞ համար, ինչպե՞ս հարցերին պատասխաններ որոնելը:

Հետազոտությունը ցույց է տվել, որ 10-12 տարեկան հասակից հետո ուղեղը տարբեր կերպ է մշակում լեզվական տեղեկությունները, քանի որ մինչև տվյալ տարիքը ուղեղը մշտապես և ավելի իտենսիվորեն է հաստատում նյարդաբանական կապեր: Դեռահասության կամ չափահասության տարիքում լեզու սովորելու ընթացքում ուղեղում «պայքար» է ընթանում, որպեսզի նոր, յուրացվելիք նյութի համար ուղեղում գտնվի որոշակի ազատ տարածություն: Այնպես որ, վաղ հասակում լեզու սովորելը ենթադրում է ուղեղի պատրաստականություն յուրաքանչյուր նոր տեղեկության յուրացման համար, ինչը չափահասության շրջանում անհամեմատ աշխատատար աշխատանք է (տե՛ս՝ Կորդոլա, Լեջանդրո, 2010):

Վաղ երկլեզվությունը երեխայի մեջ զարգացնում է ինքնավստահության և ինքնաիրացման կարողությունը: Նա ինքնավստահություն է զգում, երբ կարող է լինել «կամուրջ/կապակցող» երկու, տարբեր մշակույթի ներկայացուցուցիչ երեխաների միջև, միևնույն ժամանակ

խաղի ընթացքում (<http://ri.ues.edu.sv/590/1/10136247.pdf>):

Երկրորդ լեզվի իմացությունը հենց մանուկ տարիքում է հնարավորություն տալիս շփվել տարբերվող երաժշտության, պատմության, գրականության հետ, որոնցում արտացոլված են տարբեր ազգերի անհատական մոտեցումները և այլն: Արդյունքում՝ երեխայի մոտ հենց վաղ հասակից ձևավորվում է ճաշակ և քննադատական մտածողություն, որը հետագայում, չափահասության շրջանում, օգնում է սոցիալական և հաղորդակցական հարաբերություններում:

Երկրորդ լեզվի վաղ ուսանման հետ կապված բարդություններ

Ինչպես արդեն նշեցինք, հողվածի այս մասը կտրամադրվի այն հանգամանքների վերլուծությանը, որ քննարկվում են լեզվաբանության մեջ երկրորդ լեզվի վաղ ուսանման ընդդիմախոսների կողմից: Տարբեր վտանգներ և ռիսկ-գործոններ, իհարկե, գոյություն ունեն, քանի որ գործը վերաբերում է անհատին, որը մեծանում է և զարգանում տարբեր (ընտանեկան, տնտեսական թե սոցիալական) միջավայրում: Բացի այդ, յուրաքանչյուր մարդ ունի անհատական ընդունակություն և ճանաչողության կարողություն: Այստեղից ելնելով՝ դժվար է պնդել, որ բոլոր երեխաները կարող են միանման հաջողության հասնել վաղ հասակում լեզվի ուսանման արդյունքում:

Կարևոր է ընտանեկան գործոնի նախատեսումը, տնտեսական վիճակը, ծնողների կրթության մակարդակը, միջավայրը, որտեղ տեղի է ունենում երեխայի հանրայնացումը, և անհատական բանականության մակարդակը, որը բոլոր մարդկանց մեջ տարբեր է, և անհնար է

առանց որոշակի բացառությունների այն փոխելը:

Ելնելով հետազոտություններից՝ լեզվաբանների մի որոշ մաս եկել է եզրակացության, որ այն երեխան, որը զուգահեռաբար տիրապետում է երկու լեզուների, միջինում 3-6 ամիս ուշ է սկսում խոսել, ի տարբերություն մյուս հասակակիցների, նաև գոյություն ունի վտանգ, որ լեզուները հնարավոր է միմյանց հետ շփոթել վաղ հասակում երկրորդ լեզու սովորելու պատճառով, այն դեպքում, երբ երեխան դեռ անհրաժեշտ մակարդակով չի տիրապետում մայրենի լեզվին (Կորդովա, Լեջանդրո, 2010): Ինչպես պարզաբանում է Ռեհմանը, նորմալ է և վտանգ չի ներկայացնում կոգնիտային զարգացման համար, եթե 4 տարեկան հասակում երեխան լեզուները շփոթում է իրար հետ, առանձնապես սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ որևէ լեզվից երեխան զգում է բառերի պակաս՝ մտածածի փոխանցման համար, և նա երկրորդ լեզվից է փոխառնում լեզվական միավորներ (Կորդովա, Լեջանդրո, 2010): Թեպետ, սա չի նշանակում լեզուների շփոթում, ուղղակի, տեղի է ունենում ժամանակավորապես տարբեր լեզուներից բառերի հերթագայություն, որը ժամանակի ընթացքում ուղղելի է՝ կգա ժամանակ, և երեխան կգտնի ցանկալի տեղեկագրի համար համապատասխան բառը կամ էլ արտահայտությունը:

Գիտնականների այն մասը, որը չի աջակցում վաղ հասակում երկրորդ լեզու սովորելուն, պարզաբանում է, որ երկրորդ լեզվի զուգահեռ ռեժիմում սովորեցնելը խափանում է երեխայի կոգնիտային զարգացումը և խանգարում մայրենի լեզվից բարձր իրազեկությունների

հասնելուն: Օրինակ, փոքրամասնությունների երեխաների համար երկրորդ լեզվի ուսուցումը վաղ հասակում հնարավոր է քննարկել և՛ որպես դրական, և՛ որպես բացասական երևույթ, քանի որ փոքրամասնությունների համար երկրորդ լեզվի ուսուցումը վաղ հասակում հարուցում է որոշակի խափանումներ, և արդյունքը երակարատև հեռանկարն է (Կորդովա, Լեջանդրո, 2010): Նրանց հասակակիցները, որոնք միայն մայրենի լեզվով են սովորում, դպրոցում որոշակի ժամանակամիջոցում ավելի արագ ակադեմիական նվաճումներ են ունենում, թեպետ երկլեզու երեխաների համար երկլեզվության դրական արդյունքը գալիս է չափահաս տարիքում, երբ նրանք, ի տարբերություն իրենց միալեզվյա հասակակիցների, տիրապետում են կոգնիտային թե հաղորդակցական առավելությունների:

Վաղ հասակում երկրորդ լեզու սովորելու հասարակական անհրաժեշտ են լրացուցիչ պարապմունքներ, ժամանակ և էներգիա, ինչը հաճախ բարդ և ձանձրացուցիչ գործընթաց է, առանձնապես վաղ փուլում, երբ դժվար է երեխային բացատրել, թե իր համար որքան կարևոր է երկու լեզվի իմացությունը, այն դեպքում, երբ երեխան այս տարիքում ֆիզիկապես ակտիվ է, և նրա բնական պահանջումն է խաղը և ավելի ազատ ժամանակի անցկացումը հասակակիցների հետ:

Փորձից ելնելով, ասում են, լինում են դեպքեր, երբ երկու լեզուների գույահեռաբար սովորելու դեպքում երեխաները երկրորդ լեզվից չեն կարողանում հասնել ցանկալի հաջողության և դրա պատճառով նեղվում են, փոխանակ խոսելու ընթացքում թույլ

տրված սխալներն ուղղելու, նրանց մոտ ձևավորվում է որոշակի բարդույթ և սխալներ թույլ տալու վախից փորձում են խուսափել հաղորդակցվելուց: Այս խնդիրն առանձնապես ի հայտ է գալիս վաղ հասակում: Թեպետ նշվածն անչափ անհատական է, որի հաղթահարումը պետք է ապահովեն ծնողները և ուսուցիչները նախադպրոցական դաստիարակության հաստատություններում կամ՝ հետագայում արդեն դպրոցի տարրական աստիճանում:

Տասնիններորդ դարի հոգեբան և հետազոտող Լև Վիգոտսկին համարում էր, որ վաղ հասակում լեզվի ուսուցումն արդարացված չէ, քանի որ «մտածողության մեկ, չձևավորված ձևը փոխել մեկ այլ նույնպես չձևավորված ձևով թուլացնում է հոգեկան գործողությունն այնտեղ, որտեղ այն առանց այն էլ փոքր է» (<http://vigotski.blogspot.com/>):

Թեպետ, լեզվաբանների մի ստվար զանգված չի ընդունում տվյալ փաստը և պարզաբանում է, որ այսպես կոչված «մենտոտիկան» կամ մտապահման կարողությունը երեխայի մոտ վաղ հասակում ավելի է զարգացած (Բիստա, 2011): Բացի այդ, լեզուների իմացությունն այսօր արդեն անխուսափելիություն է և անհնար է այդ անհրաժեշտությունից խուսափելը:

Երկրորդ լեզվի ուսուցման առանձնահատկությունները և կրիտիկական շրջանի վարկածը

Կրիտիկական շրջանի վարկածը (Critical Period Hypothesis CPH), նույն «սենսիտիվության ժամանակաշրջանը» (the sensitive period) կապվում է երկրորդ

լեզվի ուսանման և վաղ հասակում նրա առանձնահատկությունների հետ:

Այս հարցը, առանձնապես վերջին շրջանում, հանդիսանում է բանավեճերի և քննարկման առարկա լեզվաբանների և երկրորդ լեզվի յուրացման հարցերի հետազոտողների միջև: Հարցը հրատապ է այնքանով, որքանով որ, առանձնապես վերջին շրջանում, աշխարհի երկրների մեծ մասում երկրորդ լեզվի ուսանում/ուսուցման մեծ պահանջարկ կա: Հողվածի այս մասը կտրամադրվի երկրորդ լեզվի ուսուցման համատեքստում կրիտիկական շրջանի վարկածի մասին գրույցին:

«Կրիտիկական շրջանի վարկածը» (Critical Period Hypothesis CPH) / «սենսիտիվության ժամանակաշրջանը» (the sensitive period), երեխայի տարիքային զարգացման որոշակի փուլ է, որի մեջ ենթադրվում է ուսուցման գործընթացում տարիքային առանձնահատկությունների առաջատար դերը: Հենց նշված վարկածի համաձայն, «սա ժամանակամիջոց է, երբ երեխան, առանց նպատակաուղղված ուսուցման, բնական պայմաններում, հեշտությամբ, արագ և լիարժեքորեն տիրապետում է լեզվին» (Ռիչարդս, Շմիդտ, 2002): «Սենսիտիվության ժամանակաշրջանն» ընդգրկում է մոտավորապես ծնվելուց մինչև հասունացումն ընկած շրջանը, երբ երեխան անհամեմատ ակտիվ և արագ է տիրապետում լեզվին, քան ետպուբերտային (Post-puberty) շրջանում (Ֆրիման և Լոնգի, 2008, տե՛ս՝ Բիստա, 2011): Միննույն ժամանակ, տարիքային առանձնահատկությունների հետ մեկտեղ, ուշագրավ են Լայտբոունի և Ստանդայի (Լայտբոուն և Ստանդա 2008, տե՛ս՝ Բիստա, 2011) տեսակետները, ըստ որոնց, բացի տարիքից, երկրորդ լեզվի

առանձնահատկությունները, սովորողի մտավոր ներուժը և նրա շուրջն առկա միջավայրը (ինչպիսիք են դպրոցը, ընտանիքը, հասարակությունը և բազմաթիվ այլ գործոններ) ստեղծում են միասնականություն, որն անհնար է անտեսել երկրորդ լեզվի ուսանում/ուսուցման գործընթացի հետազոտման ժամանակ: Գիտնականների պարզաբանմամբ, ըստ «Կրիտիկական շրջանի վարկածի», վաղ հասակում լեզու սովորողներն ունեն ավել մետա-լեզվաբանական առավելություն լեզվի՝ չափահաս սովորողների համեմատ, նաև, նրանց խոսքը հաճախ աչքի է ընկնում շարահյուսական և քերականական տեսակետից ճշտությամբ և հղկվածությամբ:

Մի կողմից, «Կրիտիկական շրջանի վարկածի» հետ կապված հետազոտությունները հստակեցրին, որ տարիքային առանձնահատկությունները կարևորագույն դեր են կատարում ինչպես առաջին լեզուն սովորելու, այնպես էլ երկրորդ լեզվի յուրացման ընթացքում, իսկ մյուս կողմից՝ անհնար է հստակ սահմանազատումը, քանի որ բոլորի համար սահմանված նորմ գոյություն չունի. յուրաքանչյուր անհատ բնութագրվում է անհատականությամբ և հաճախ, տարիքային առանձնահատկությունների հետ մեկտեղ, ուշագրավ են նաև այլ անհատական տվյալներ և արտաքին գործոններ, որում ապրում է և զարգանում լեզու սովորողը:

«Կրիտիկական շրջանի վարկածի» էությունը կայանում է հենց նրանում, որ տարիքը, որպես էֆեկտիվ միջոց, հնարավոր է կիրառվի տարբեր հանգամանքների հետ հարաբերակ-

ցուրտամբ, և ոչ թե որպես մեկուսացված, այլ գործոններից անկախ երևույթ:

Չնայած նրան, որ առավելապես միևնույն տարիքային խմբի ներակայացուցիչներն ավել կամ պակաս չափով միատեսակ արդյունքի են հասնում լեզու սովորելիս, անհնար է անտեսել այլ անհատական առանձնահատկություններ, օրինակ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են մոտիվացիան, գեղերը, առաջին լեզվի գործոնը, ընտանիքի դերը, միջավայրը, որում հանրայնանում է լեզու սովորողը և նմ.:

Թեպետ, ուշագրավ է բազմաթիվ հետազոտություններով ամրապնդված վարկածը, որ երիտասարդն անհամեմատ ավելի շատ առավելություն ունի ինչպես լեզու սովորելու, այնպես էլ ցանկացած այլ տեղեկություն ստանալու և մշակելու տեսանկյունից, քան չափահասության և հետագա տարիքում, բացի բնության մեջ գոյություն ունեցած հազվադեպ բացառություններից:

Հնարավոր է, չափահաս տարիքում որպես լեզու սովորելու դրական բնութագրիչ քննարկենք որոշ այնպիսի գործոններ, ինչպիսիք են քերականական կառույցների գիտակցման կարողությունը, շարահյուսությունը և նմ., թեպետ, պետք է նշել նման առավելությամբ սովորած լեզուն, որպես օրենք, կարճատև կենսունակությամբ է բնութագրվում, ի տարբերություն փոքր տարիքում, առանց ամենայն համատեքստային վերլուծման սովորած լեզվի, որը ժամանակի ընթացքում ձևավորվում է որպես բնական հմտություն:

Տարիքային առանձնահատկությունների քննարկման ժամանակ հետազոտողների միջև գոյություն չունի միահամուռ մոտեցում երկրորդ լեզվի

ուսուցման համատեքստում, քանի որ հետազոտությունները, որոնք անց են կացվել հարցի շուրջ առկա վարկածների ամրապնդման համար, տարբեր արդյունքներ են ցույց տալիս: Մասնավորապես, հետազոտությունների հետևանքով հավաստվեց, որ երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ տարիքը ոչ միակ, սակայն անչափ ուշագրավ գործոն է, որը սահմանում է երկրորդ լեզվից նվաճված հաջողությունները:

Եզրակացություն

Ինչպես բազմաթիվ հետազոտությունները, դիտարկումները և փորձարկումներն են հավաստում, վաղ հասակում սովորած լեզվի առավելություններն անհամեմատ ավել են, քան թերությունները: **Հաղորդակցական** առավելությունները, որոնք հենց վաղ հասակում է նկատում երեխան, նրան տալիս են նոր հարաբերությունների լայն ասպարեզ, նաև, վեճի և քննարկումների առարկա չեն հանդիսանում այլևս **կարիերային** առաջընթացի հնարավորությունները, որ տալիս է վաղ հասակում երկրորդ լեզվի ուսանումը, **կոգնիտային** զարգացումը, որն արդյունք է վաղ երկլեզվության, դեռահասի համար ճանապարհ է բացում դեպի հաջողակ կյանք: *Անհատական ազատություն, ինքնավստահություն, հավատն իր ուժերի նկատմամբ* այն հատկանիշներն են, որոնց ձևավորման կարևորագույն պատճառը երկրորդ լեզվին վաղ հասակում տիրապետելն է: Բացի այդ, միանշանակ կարելի է ասել, որ հետազոտությունների դրական արդյունքների նախատեսմամբ և ժամանակակից հասարակության առջև ծառայած լեզուների իմացության պահանջից և բազմակողմանի

անհրաժեշտություններից ելնելով, երկրորդ լեզվի հենց վաղ հասակում տիրապետումը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները և փորձը, լիարժեքորեն լեզու սովորել հնարավոր է միայն վաղ հասակից սովորելու հետևանքով, բացառությամբ որոշակի ֆենոմենալ բացառությունների, երբ անհատները հաջողությամբ են հաղթահարում չափահասության շրջանում երկու կամ ավելի լեզուներ սովորելը: Թեպետ այստեղ ևս պետք է նշել, որ հենց վաղ հասակում երկրորդ լեզվի ուսուցման հետևանքով զարգացած կարողություններն են կայուն հիմք հանդիսանում դեռահասության շրջանում նվաճված բազմալեզվության: Համարյա անհնար է միալեզուն դառնալ լրիվ երկլեզու /բազմալեզու չափահասության հասակում, քանի որ հնարավոր է մինչև որոշակի մակարդակ լեզու սովորել ցանկացած տարիքում, թեպետ առանց խորթ շեշտադրության խոսելու կամ բարձր ակադեմիական նպատակների համար չափահասության շրջանում սովորած լեզվի կիրառումը համարյա անհնար է:

Վերոնշյալին գուգահեռ, վաղ հասակում երկրորդ լեզվի ուսանման համար պետք է նկատի առնվեն այն

կարևորագույն հանգամանքները, որոնք սահմանում են հաջողությունը: Այս հանգամանքների ոչ լրիվ ցանկն է. դպրոց, ընտանիք, հարևանություն, ընկերություն, ընդհանրապես հասարակություն, որտեղ ընթանում է երեխայի ձևավորումը: Եթե տվյալ գործոնները դրական են ազդում և պոզիտիվ ներգործություն են ունենում երեխայի վրա, արդյունքն առավելապես դրական է: Թեպետ, ինչպես արդեն նշել ենք հոդվածի հիմնական մասում, անհատական առանձնահատկությունները, ինչպիսիք են բանականության մակարդակը, ինքնագնահատման և իր նկատմամբ ունեցած հավաստի կարողությունը, մոտիվացիան, որոնք բնածին կարողություններ են, սպասելի արդյունքը չկանխատեսված են դարձնում, անկախ արտաքին գործոնների դրական ներգործությունից: Կամ ընդհակառակը, բնածին կարողությունների զարգացումը կարող է խափանվել համապատասխան տնտեսական, սոցիալական թե այլ գործոնների բացասական ներգործության պատճառով:

Եվ վերջում, որպես եզրակացություն կարելի է ասել, որ չնայած հարցի շուրջ առկա արմատապես տարբեր տեսակետներին, երկլեզվությունը /բազմալեզվությունը անխուսափելի անհրաժեշտություն է, որը նվաճվում է փոքր տարիքում սկսված ուսուցմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Աբելլո-Կոնտեսսի, 2008 - Abello-Contesse Ch.2008 - “Age and the critical period hypotheses”- Abello-Contesse Ch, 2008,. ELT journal

- Բիստա, 2011 - Bista K.K 2011 - “Age as an Affective factor in Second Language Acquisition” (Troy University) - http://astate.academia.edu/KrishnaBista/Papers/129491/Age_as_an_Affective_Factor_in_Second_Language_Acquisition
- Վիգոտսկի, 1928- vigodski 1928 – «Երեխայի մշակութային զարգացման հիմնասխեմա», <http://vigotski.blogspot.com/>; http://astate.academia.edu/KrishnaBista/Papers/129491/Age_as_an_Affective_Factor_in_Second_Language_Acquisition
- Շարդովա, 2010 - Cordova C, Alejandro W, Menjivar G, Lisseth Y, Garmendez M, Miguel E, 2010 - Advantages and disadvantages learning English as a foreign language to become bilingual. (Graduation work at University of El Salvador) 2010
- Ռիչարդս, 2002 - Richards, J., & Schmidt, R. (2002). Longman dictionary of language teaching & applied Linguistics (3rd ed.). NY: Pearson Education.
- Հոնստոն, 2002 - Hohnstone R. 2002 - “Addressing "the age factors: some implications for languages policy” , University of Stirling, Scotland. 2002. <http://www.coe.int/t/dg4/linguistic/source/JohnstoneEN.pdf>

Irine Shubitidze

*Center for Civil Integration and
Inter-Ethnic Relations*

Age factors during the non native language acquisition

The article dedicates to present the importance of the age factors in the process of acquisition in general, and particularly in the second language learning process. The paper presents as a considerable factor to study mother tongue properly as well as for the second language acquisition. In the article an attempt is made to study and analyze the age related researches on the basis of critical period hypothesis and other relevant variable. The article suggests several other significant circumstance that is inseparable from the age factor for second language learners. The key question of the subject is how age affects second language acquisition and do people of the same age group possess the same learning characteristics and abilities. It is generally believed that better outcomes during the second language acquisition is associated with the age of the learner, that means to select an optimal period for language acquisition. The article presents the evidence-based factors to support early-learners as well as criticism of the hypothesis. It is fundamental to cite how age factors work or function on second language acquisition, that affects on children either positively or negatively during the learning process